ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,

ԴՈՑԵՆՏ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

**Արփինե Գեղամի Բիշարյանի՝ «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում հրապարակային պաշտպանությանը ներկայացված Արփինե Բիշարյանի ուսումնասիրությունը վերաբերում է տեղական ինքնակառավարման՝ որպես հասարակական-քաղաքական ինստիտուտի ապակենտրոնացման գործընթացի, եվրոպական չափորոշիչների համատեքստում մասնակցային կառավարման խթանման, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպմանն ու գործունեությանը, որոնք գործնական դրսևորումներ ունենալով պահանջում են տեսաիրավական լուծումների անհրաժեշտություն՝ օրենսդրական փոփոխությունների համար գիտական հիմքեր ստեղծելու նպատակով:

Աշխատանքը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է՝ պայմանավորված ձևավորման պահանջների հետևողական պահպանմամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են գիտական հրապարակումներում:

Բովանդակային և կառուցվածքային առումով թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը համապատասխանում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսությունը կազմում է 170 էջ, բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակի կողմից հետազոտության նպատակը տեղական ինքնակառավարման համակարգի սահմանադրաիրավական առանձնահատկությունների բացահայտման, եվրոպական իրավական չափորոշիչներին համապատասխան տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության, մասնակցային ժողովրդավարության զարգացման և համայնքային համաչափ կառավարման սահմանադրաիրավական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրումն է՝ տեսական և իրավակիրառ պրակտիկայի համատեքստում:

Առաջադրված նպատակին հասնելու և հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու համար տեղական ինքնակառավարման տարբեր հայեցակարգերի և համակարգերի ուսումնասիրության արդյունքում, փորձ է արվել վերհանել և հիմնավորել այդ ինստիտուտի սահմանադրականացման հիմնահարցերը՝ անդրադառնալով տեղական ինքնակառավարման եզրույթի ձևակերպմանը և իրավական կարգավորմանը:

Ատենախոսության կառուցվածքը հեղինակին հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես՝ առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր և կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Գրախոսվող աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը հիմնականում հասել է իր առջև դրված նպատակներին, մասնավորապես՝ թեմային առնչվող հիմնախնդիրների ու հարցադրումների շրջանակում ներառված հարցերի գիտագործնական նշանակությանը, հետազոտության ժամանակակից վիճակին՝ պայմանավորված սահմանադրական կարգավորումներով շրջանակում տեղական ինքնակառավարման վերաբերյալ նոր մոտեցումների և գիտականորեն հիմնավորված լուծումներ առաջադրելու կարևորությամբ:

Պաշտպանությանը ներկայացված հիմնադրույթները, կարծում եմ, համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ ինչպես նորույթի, այնպես էլ հիմնավորվածության չափանիշներով: Միաժամանակ, կարծում եմ, որ հեղինակի կատարված առանձին եզրահանգումներ խնդրահարույց են, սակայն դրանք բացառապես

առնչվում են գիտական բանավեճի շրջանակներին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում բխում են ատենախոսության տրամաբանությունից, համապատասխանում առաջադրված նպատակներին և խնդիրներին, իսկ պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները ունեն գիտավերլուծական հիմնավորվածություն և գործնական նշանակություն:

Միևնույն ժամանակ աշխատանքում տեղ են գտել վիճահարույց դրույթներ, որոնց առնչությամբ իմ կողմից կատարված նկատառումներն են՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկաացվող առաջին դրույթի շրջանակներում ներկայացված արդյունքները: Չթերագնահատելով ատենախոսի հետազոտության ձգտումները, կարծում եմ, որ առաջարկվող դրույթով՝ այն, որ համայնքային և պետական շահի բաղդատման տեսանկյունից կարող է վիճահարույց թվալ, մասնավորապես պետական շահի տեսանկյունից որպես ինքնուրույն հասկացություն և նպատակ, մինչդեռ համայնքային շահը պայմանավորված է բացառապես համայնքային նշանակության հանրային հարցերի լուծմամբ և համայնքային ծառայությունների մատուցմամբ և այս համատեքստում ընդգծված անդրադարձը այնքան էլ լիարժեք չի դարձնում պաշտպանության ներկայացվող դրույթը (23-24 էջեր):

Հարկ է նկատել, որ պաշտպանության ներկայացվող վերոնշյալ հիմնադրույթի շարադրանքը վիճահարույց է և լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունի:

2. Կարևորելով ընտրությունների միջոցով քաղաքացիների քաղաքական ինքնահաստատման երաշխիքը՝ պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների իրավական կարգավորման, տեղական ընտրական համակարգ եզրույթի գիտական սահմանման, քաղաքական մշակույթի չեզոքացման, կրթական ստանդարտների հիմնավորմանն առնչվող դիրքորոշումներ՝ հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը: Սակայն ոչ ամբողջապես են ներկայացվել այն հիմնահարցերը, որոնք վերաբերվում են տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման գործընթացում համայնքում մեկ տարի հաշվառում ունեցող, սակայն քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցության հնարավորություններին և ինչպիսի արդյունք կարող է ապահովվել այդ մասնակցությունից:

3. Պաշտպանության ներկայացրած 4-րդ դրույթը բացառապես վերաբերվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպման հիմնական հիմնական ուղղություններին, «համայնքային քաղաքականության» հիմնավորմանը:

Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով տարաբնույթ և բազմաբովանդակ լիազորությունների նախատեսումը պայմանավորված է համայնքային խնդիրներով և նպատակներով, այլ կերպ՝ գործունեության հիմնական ուղղություններով, որոնց իրականացմանն է ուղղված մունիցիպալ գործունեությունը:

Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից համայնքային ռեսուրսների նպատակային կառավարումը և համայնքի զարգացումը պայմանավորելով «համայնքային քաղաքականության» կառուցողական կազմակերպման հետ և համայնքային կյանքի տարբեր բնագավառների զարգացման այդ «քաղաքականությունը» չկապելով կենտրոնական իշխանության քաղաքականության հետ, հեղինակը այն ամբողջապես չի տարանջատում պետական քաղաքականությունից, ինչը կարծում եմ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

4. Չվիճարկելով հեղինակի դիքորոշումը տեղական ինքնակառավարման համակարգի համաչափ զարգացման գործընթացում կենտրոնական իշխանության դերակատարության վերաբերյալ՝ կարծում ենք, որպես պաշտպանության ենթակա դրույթը հիմնավորվածության տեսանկյունից որոշակիորեն թերի է, մասնավորապես պատվիրակված լիազորությունների, այն կատարող սուբյեկտների և դրանց նկատմամբ վերահսկողության ձևերը, մասնավորապես բացակայում է անդրադարձը պատվիրակված լիազորությունների փոխանցումը այն կատարող սուբյեկտների միջև: Կառավարության աջակցությունը համայնքային գործունեությանը պայմանավորված է ֆինանսական միջոցների տրամադրմամբ, տարածքային համաչափ զարգացման ծրագրերի նորացմամբ, իսկ ատենախոսության մեջ առաջարկված կառուցվածքային տարրերի կիրարկման արդյունքը կլիներ վստահելի փոխհարաբերությունների մշակույթի ձևավորումը և արդյունավետ պետական հսկողությունը:

5. Տեղական ինքնակառավարումը և պետական կառավարումը հանդես են գալիս որպես սոցիալական կառավարման տարբեր մակարդակներ՝ ազդելով հասարակության վրա տարբեր մեթոդներով և առաջադրելով կառավարման տարբեր խնդիրներ՝ սոցիալական փոփոխություններն օպտիմալացնելու և ռացիոնալ ինքնակազմակերպման

մակարդակին անցնելու համար: Տեղական ինքնակառավարման և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և բնակչության միջև հակասությունների վերարտադրումը կապված է «փոխադարձ իրավասության ոլորտի» ոչ հասուն վիճակի հետ: Կառավարման սուբյեկտի և օբյեկտի հավասարակշռությունը ձեռք է բերվում տեղական ինքնակառավարման նկատմամբ բնակչության բաց լինելու և տեղական համայնքի հետադարձ կապի փոփոխականության շնորհիվ, պայմանով, որ տեղական ինքնակառավարումը դառնում է «բնակչության շահերի ներկայացում», իսկ տեղական ինքնակառավարման «միջնորդությունը» նպաստելու է բնակչությանը երկխոսության հնարավորության ստեղծմանը և տարածքային կառավարման զարգացմանը:

Անդրադառնալով հեղինակի՝ վերոգրյալ 5-րդ դրույթին, որը վերաբերվում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերություններին, ինչպես նաև համայնքային հանրության մասնակցության հնարավորություններին, փորձ է արվել հիմնավորել այդ փոխգործակցության զարգացման, ուղիները և քաղաքացիների մասնակցության նպատակահարմարությանը, ինչը նպաստելու է պետական կառավարման տարածքային կառավարման-ՏԻՄ-համայնքի բնակիչ փոխհարաբերության եռանկյունու ձևավորմանը: Այս առնչությամբ ներկայացված դիտարկումները վերաբերելի են բացառապես գործադիր իշխանության մարմիններին, ինչպես նաև բացակայում է անդրադարձը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդիր և դատական իշխանությունների հետ փոխհարաբերությանը:

Այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ վերոգրյալ դիտողությունները ունեն մասնակի բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը և ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Արփինե Գեղամի Բիշարյանի՝ «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, գիտական նորույթ պարունակող ամբողջական հետազոտություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ

օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
դոցենտ Ա.Ս. Հայրապետյան

10 հունիսի 2024թ.

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա. Ս. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ա. [illegible]րինյան

10 հունիսի 2024թ.